ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի ապրիլի 26-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09-3» պայմանագրում 2023 թվականի մայիսի 30-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Վաճառողի առաջարկությամբ ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ժամկետը» սյունակում նշված «30 օրացուցային օր» բառերը փոխարինվել են «60 օրացուցային օր» բառերով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.8 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
26.04.2023թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 30 » մայիսի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Գյոդակյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 26.04.2023թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ժամկետը» սյունակում նշված «30 օրացուցային օր» բառերը փոխարինել «60 օրացուցային օր» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Գյումրի, Փանյան 1
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 05524546
Հ/Հ՝ 900011005841	Հ/Հ՝ 2050122024171001
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Լ. Գյոդակյան
/ստորագրություն/	/ստորագրություն/